Սրահեր

ISSN 2579-2571

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

1/2021

Հանգանդության գաղտնիքը

էջ 7

Կիտիի սիրուն ակնոցները

էջ 22

Օրացույց «Աղոթք 30 օր»

էջ 16

Դասավորի՛ր կենդանիների անունների առաջին տառերն ըստ հերթականության և կիմանաս ամսագրի այս համարի թեման:

□□□□□□□□

□□□□□□□□

□□□□□

□□□□

□□□□□

□□□□□□□□

□□□□□□

□□□

□□□□□

□□□□□□

□□□□

□□□□□□□□

Այո, Աննա՛: Եվ ասեմ, որ այս մեկն ամենադժվարն է, հատկապես՝ երբ մեզ այնքա՞ն չարաճճիություններ են կանչում:

Արա՛մ, իսկ դու արդեն վերծանե՞լ ես, թե ինչ ենք սովորելու «Արահետ»-ի այս համարում:

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍԻՐՈՒՄ ԵՄ

– Անի՛, – ասաց մայրիկը, – գնա՛ լվա և փոխի՛ր: Այն ամբողջովին է:

– Բայց, ... ինչու՞ լվանամ և փոխեմ: Չէ՞ որ ես վաղը նորից

եմ լինելու, պատասխանեց :

– Մի՛ վիճիր, այլ հնազա՛նդ եղիր: Չէ՞ որ եթե դու ինձ ես , ապա կանես այն, ինչ ես քեզ խնդրում եմ:

– Լավ, , – պատասխանեց :

լվանալուց ու փոխելուց հետո ցանկացավ դիտել:

– , մինչ դիտելը, հավաքի՛ր քո :

– , բայց ինչու՞ հավաքեմ , եթե վաղը նորից խաղալու եմ

և թափեմ :

– Եթե դու ինձ ես, հնազա՛նդ եղիր:

– Լավ, :

հավաքելուց և դիտելուց հետո

սովածացավ:

– , – ասաց , – կարելի՞ է ես :

– Բայց , – ասաց ժպիտով, –

ինչու՞ , եթե դու վաղը նույնպես սոված ես լինելու:

– Խնդրու՛մ եմ, , – ասաց և ժպտաց:

– Դե իհարկե, : Չէ՞ որ ես քեզ եմ :

Տատյանա Կոստեցկայա

ԱՐԱՀԵՏ 1/21

ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ

Համբարձվելուց առաջ Հիսուսը, հավաքելով Իր աշակերտներին, ասաց. «Ամեն իշխանություն Ինձ է տրված՝ երկնքում և երկրի վրա: Ուրեմն, գնացե՛ք ու սովորեցրե՛ք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ ես ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»: Եվ նրանք գնացին ու քարոզեցին: Առաջիններից մեկը, ով կատարեց մեծ հանձնարարությունը, Պողոս առաքյալն էր:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Ես Պողոսն եմ՝ Հիսուս Քրիստոսի առաքյալը: Սերում եմ Իսրայել ժողովրդից՝ Բենիամինի ցեղից: Ես հրեա եմ: Բայց այն ամենը, ինչ ես ճիշտ էի համարում Մովսեսի օրենքով, հիմա, հանուն Քրիստոսի, ոչինչ եմ համարում: Հիմա ես աշխատում եմ ավետարանել ոչ այնտեղ, որտեղ արդեն հայտնի է Քրիստոսի մասին, այլ այնտեղ, որտեղ Նրա մասին դեռ չեն լսել:

Տերը երկրի վրա ստեղծեց Եկեղեցին: Անցան հարյուրամյակներ, իսկ քրիստոնյաները դեռ նախկինի նման աշխարհ էին տանում Աստծո Խոսքը: Շոտլանդիա, XIX դարի սկիզբ: Այդ ժամանակ ծնվել է Դավիդ Լիվինգսթոնը, որը հետագայում ճանաչված միսիոներ է դարձել Աֆրիկայում:

Իմ անունը Դավիդ Լիվինգսթոն է: Ես ծնվել եմ Շոտլանդիայում 1813 թվականին, աղքատ ընտանիքում: Տաս տարեկանից ստիպված եմ եղել աշխատել գործարանում: Աշխատանքից հետո գնում էի դպրոց, և այնտեղ ամենից շատ ինձ դուր էր գալիս աշխարհագրությունը: Ես որոշեցի դառնալ միսիոներ և քարոզել այն վայրերում, որտեղ մարդիկ երբեք չէին լսել Քրիստոսի մասին: Իմ կյանքի երեսուն տարիները նվիրել եմ ավետարանչությանն Աֆրիկայում: Քարոզելուց բացի ես օգնում էի հիվանդներին ու կարիքավորներին, հետզհետե ավելի առաջ էի գնում՝ դեպի մայրցամաքի խորքերը: Տերը պաշտպանում էր ինձ վայրի գազաններից և այլ վտանգներից:

ԴԱՎԻԴ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ

Նույն դարը: Մերի Սլեսոր: Տերն այս կնոջն ուղարկել էր ավետարանելու հեռավոր աֆրիկյան երկրներում:

Ես Մերի Սլեսորն եմ: Աֆրիկացիներն ինձ կոչում էին «սպիտակ մայր», որովհետև ես հոգ էի տանում նրանց համար: Ես Աֆրիկայում միսիոներուհի էի այն ժամանակ, երբ տեղի բնակչությունը դեռ ոչինչ չէր լսել իրական Աստծո մասին: Տերն ինձ համարձակություն էր տալիս Ավետարանը քարոզելու համար, այնպես որ նույնիսկ ամենադաժան աֆրիկյան ցեղերը խոնարհվում էին Հիսուս Քրիստոսի անվան առաջ և ընդունում էին Նրան որպես Փրկիչ: Այն ժամանակներում Աֆրիկայում ավանդույթ կար՝ սպանել ծնված երկվորյակներից մեկին, քանի որ համարվում էր, որ երկրորդ երեխան սատանայից էր: Ես այդպիսի երեխաներին վերցնում էի իմ պաշտպանության ներքո և դառնում էի նրանց մայրը:

ՄԵՐԻ ՍԼԵՍՈՐ

Իսկ այժմ տեղափոխվենք ԱՄՆ: Դուայթ Մոուդի: Աստված այս մարդուն նախապատրաստել էր Իր Խոսքը տարածելու համար: Հենց Մոուդիի միջոցով էր Տերը եկեղեցիներ ու կիրակնօրյա դպրոցներ ստեղծում ԱՄՆ-ում և այլ երկրներում:



ԴՈՒԱՅԹ ՄՈՒԴԻ

Իմ անունը Դուայթ Մոուդի է: Ես ծնվել եմ 1837 թվականին ԱՄՆ-ում: Ողջ աշխարհում ինձ ճանաչում են որպես ավետարանիչ և հրատարակիչ, բայց ես իմ կյանքը միանգամից չեմ նվիրել Տիրոջը: Երիտասարդ ժամանակ ես ուզում էի շատ գումար վաստակել և կարիերա ստեղծել: Տարիքի հետ ես հրաժարվեցի մեծ գումարներ աշխատելուց, որպեսզի ինձ լիովին նվիրեմ Քրիստոսին ծառայելուն: Տերն ինձ օժտել էր քարոզչի պարգևով: Որտեղ էլ ես ծառայություն անեի, իմ քարոզներին շատ մարդ էր գալիս: Ինձ հրավիրում էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի տարբեր եկեղեցիներ: Տերն ինձ գործիք էր դարձրել Իր ձեռքում, և իմ քարոզներից հետո տասնյակ հազարավոր մարդիկ որոշում էին իրենց կյանքը Քրիստոսին նվիրել: Տերն ինձ թույլ տվեց մեծ գործ անել Իր համար:

Ջեյմս Հադսոն Թեյլոր: Այս մարդը ևս, լսելով Աստծո կոչը, արձագանքեց դրան: Նա իր կյանքը նվիրեց Ավետարանի քարոզչությանը Չինաստանում:

ՀԱԴՍՈՆ ԹԵՅԼՈՐ

Իմ անունը Ջեյմս Հադսոն Թեյլոր է: Դեռ իմ ծնվելուց առաջ ծնողներս ինձ նվիրել էին Աստծուն: Մանկուց ես երազում էի դառնալ միսիոներ Չինաստանում, բայց քանի որ հաճախ էի հիվանդանում, ծնողներս արդեն հույս չունեին, թե դա կիրականանա: Սակայն տասնութ տարեկանում ես սկսեցի ժրաջանորեն զբաղվել սպորտով, սովորել չինարեն և պատրաստվել այդ երկիր մեկնելուն: Այդ ժամանակ Չինաստանում պատերազմ էր: Մարդկանց մոտ լինելու համար ես ոչ միայն սովորեցի իրենց լեզուն, այլև ջանում էի նրանց նման լինել հագուստով, սանրվածքով և վարքով: Իմ կյանքի ամենամեծ գործը Ներչինական միսիայի հիմնումն էր: Ես նպաստում էի Չինաստանում քրիստոնեական եկեղեցիների բացմանը և ժողովրդի հոգևոր արթնությանը:

Իսկ այս հատվածը դեռ ազատ է: Հնարավոր է՝ այն պատրաստված է քեզ համար: Գուցե, դու լսես Աստծո կանչը և արձագանքես դրան, ինչպես վարվեց Եսայիա մարգարեն. «Եվ լսեցի Տիրոջ ձայնը, որ ասում էր. «Ու՞մ ուղարկեմ, և ո՞վ կգնա մեզ համար». և ես ասացի. «Ահա ես, ի՛նձ ուղարկիր»»: Ուրեմն, գնացե՛ք ու սովորեցրե՛ք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ամեն:

ԻՆՉԻ՞ ՎՐԱ Է ԱՄԵՆ ԲԱՆ ՀԻՄՆՎԱԾ

Վալդեմար Յորն

Արդյո՞ք քեզ ծանոթ է հին ասացվածքը. հնազանդությունը պասից ու աղոթքից լավ է: Այսինքն՝ ավելի կարևոր է: Մարդկանց համար դժվար է հնազանդ լինելը, լինեն նրանք երիտասարդ, թե ծեր, մեծ, թե փոքր: Բայց չէ՞ որ հենց հնազանդության վրա է հիմնված ամեն բան: Մեքենան մոտեցավ խաչմերուկին, իսկ լուսացույցի վրա կարմիր լույսն է վառվում: Արգելակեց: Պատկերացրու՛, թե մեքենան անցավ կարմիր լույսի տակով: Վարորդն անպայման վթարի կենթարկվեր, կամ ինչ-որ մեկին կհարվածեր: Այդ պատճառով մենք միշտ փողոցն անցնում ենք միայն կանաչ լույսի դեպքում, դրանից առաջ նայելով թե՛ աջ, թե՛ ձախ: Մեզ այդպես են սովորեցրել, մենք այդպես էլ անում ենք: Հենց սա է հնազանդությունը: Այն միշտ մեր անվտանգության համար է: Ընտանիքում նույնպես ամեն ինչ այնպես է, որ կրտսերներն ավագներին հնազանդվեն, քանի որ ավագները կրտսերների համար պատասխանատու են մարդկանց և Աստծո առաջ:

Իսկ որ Աստծուն մենք հնազանդվում ենք, դա հասկանալի է: Չէ՞ որ Նա ամեն բան գիտի: Եվ եթե Նա ասում է, որ չի կարելի ինչ-որ բան անել, ապա որովհետև գիտի. հենց մեզ համար վատ կլինի, եթե չհնազանդվենք:

Օրինակ, Աստված ասում է. «Մի՛ գողացիր»: Մենք որքա՞ն ենք տխրում, երբ ինչ-որ բան ենք կորցնում: Ճիշտ չէ՞: Կամ Նա ասում է. «Լսի՛ր հայրիկիդ ու մայրիկիդ»: Եթե երեխաները ծնողներին լսում են, ապա ընտանիքում խաղաղ ու հանգիստ է, ուրախ ու ապահով: Իսկ եթե ինչ-որ մեկն անհնազանդ է, ապա միշտ մի բան պատահում է: Հետո հարկավոր է մտածել, հաշտվել, ներողություն խնդրել... Մի խոսքով՝ հնազանդությունը շատ կարևոր է:

Սակայն մենք բոլորս գիտենք, որ հնազանդ լինելն այնքան էլ հեշտ չէ: Միշտ ցանկանում ենք անել այնպես, ինչպես մենք ենք մտածում, կամ անել այն, ինչը մեզ դուր է գալիս և կարևոր է թվում: Ինչու՞ է այդպես: Որովհետև մարդիկ դրախտում գործել են առաջին մեղքը: Եվ այդ մեղքով ստեղծվել է անհնազանդությունը: Աստված ասել էր, որ Ադամն ու Եվան, առաջին մարդիկ աշխարհում, կարող են ուտել բոլոր ծառերի պտուղներից՝ բացի մի ծառից: Բայց նրանք անմիջապես ցանկացան հենց այդ ծառի պտուղը համտեսել: Այդ պատճառով էլ մեզ համար նույնպես այսօր հեշտ չէ հնազանդ լինել, թեև այն և՛ կարևոր է, և՛ օգտակար է, և՛ մենք գիտենք, որ դրա վրա է հիմնված ամեն բան:

ՀԱՆԱՋԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Վերցրու՛ Աստվածաշունչն ու բացի՛ր Հոբի գիրքը և Դանիելի Մարգարեության գիրքը: Իսկ հիմա գտի՛ր այդ գրքերում հղումներին համապատասխան ճիշտ բառերը (փակագծերում նշված է, թե նախադասության մեջ թվով որ բառն է հարկավոր տեղադրել) և դրանցով կազմի՛ր Հոբի գրքում գրված մեկ այլ համար:

_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _
Հոբ 20.6(1)	Դան. 7.27(30)	Հոբ 19.1(3)	Հոբ 34.19(4)
_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _
Դան. 7.14(16),	Հոբ 21.8(1)	Հոբ 7.1(10)	Հոբ 36.11(8),
_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _	_ _ _ _ _ _ _
Հոբ 22.5(6),	Հոբ 10.5(10)	Հոբ 33.26(11)	Հոբ 36.11(12):

Կազմեց Թամարա Լամբրիանովան

Դինա Շեխոյան

ՌԵՔԱԲԻՄԻ ՈՐԴԻՆԵՐԸ

Վալդեմար Ցորն

Սուրբ Գրությունները, որոնք մենք մեկ բառով կոչում ենք «Աստվածաշունչ», լի են հետաքրքիր պատմություններով: Դրանցում պատմվում է ժողովուրդների ու երկրների, զարմանալի մարդկանց մասին. իմաստունների, մարգարեների, թագավորների ու հերոսների մասին: Նրանցից շատերի անունները մեզ ծանոթ են: Օրինակ՝ Աբրահամը, Դավիթը, Սողոմոնը և, իհարկե, Հիսուսն ու Իր առաքյալները: Երբեմն աստվածաշնչյան պատմություններում և մարգարեական խոսքերում հանդիպում են հրաշալի պատմություններ մարդկանց մասին, որոնց անունները այնքան էլ հայտնի չեն: Այսօր ես կպատմեմ տարօրինակ ավանդույթներ ունեցող մարդկանց մասին: Նրանց մասին պատմությունը դու կգտնես Երեմիա մարգարեի Գրքի 35-րդ գլխում:

Մի անգամ Աստված Երեմիա մարգարեին ասաց, որ նա գնա Երուսաղեմ քաղաք, Ռեքաբիմի որդիների տուն, և նրանց հրավիրի տաճար: Երեմիան այդպես էլ արեց:

Երբ Ռեքաբիմի որդիներն եկան տաճար, նա գավաթների մեջ գինի լցրեց ու դրեց նրանց առաջ: Նրանք միաբերան հրաժարվեցին գինին խմելուց՝ ասելով. «Մենք գինի չենք խմում, որովհետև մեր հայրը՝ Ռեքաբի որդի Հովնադաբը մեզ պատվիրել է՝ ասելով. «Դուք և ձեր որդիները հավիտյանս գինի մի՛ խմեք: Տուն չշինե՛ք ու սերմ չցանե՛ք և այգի չտնկե՛ք...» Եվ իր բոլոր պատվերներում մենք հնազանդվում ենք մեր հայր, Ռեքաբի որդի Հովնադաբի ձայնին»:



Հովնադաբի ժամանակներից մինչ այն իրադարձությունները, որոնց մասին մեզ պատմում է Աստվածաշունչը, անցել էր ավելի քան երկու հարյուրամյակ: Եվ Աստված Երեմիա մարգարեին ասաց. «Քանի որ դուք հնազանդվեցիք ձեր հայր Հովնադաբի պատվերին, նրա բոլոր պատվերները պահեցիք և նրա բոլոր հրահանգների համաձայն վարվեցիք, դրա համար Ռեքաբիմի որդի Հովնադաբից հավիտյան Իմ առջև կանգնող մարդ պակաս պիտի չլինի»:

Երեմիա մարգարեն հանդիմանում էր Հուդայի ժողովրդին՝ մատնանշելով Ռեքաբյաններին և ասելով. «Ահա, թե որն է հնազանդությունը: Իսկ Աստված ձեզ ասում ու ասում է, բայց դուք Նրան չեք լսում»:

Երեմիա մարգարեն շատ վշտացած էր, որ մարդիկ Աստծուն չէին լսում: Նա գիտեր, թե ինչ դժբախտություններ էին պատահելու Երուսաղեմին և դրա բոլոր բնակիչներին՝ իրենց անհնազանդության համար:

Ի՞նչ ես կարծում.

1. Քանի՞ տարի էր անցել Ռեքաբիմի կյանքի ժամանակներից մինչ Երեմիա մարգարեի ժամանակները:
2. Ինչո՞վ առանձնացան Հովնադաբի որդիները:
3. Արդյոք կարո՞ղ ես հիշել ամենաառաջին մեղքը, որի մասին պատմվում է Աստվածաշնչում:



Լարիսա Գորոշկո

ԱՆՀԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Պաուլ Ուայթ

Դաուդին՝ ջունգլիների բժշկի օգնականը, ձեռքը դրեց Մգոգոյի ուսին և ասաց.

– Եթե ցանկանում ես, որ շնիկդ լավ շուն մեծանա, պետք է նրան սովորեցնես հնազանդ լինել: Դա նրան միայն օգուտ կբերի: Նույնիսկ Նիանի կապիկը գիտեր այդ մասին: Ահա, լսի՛ր...

Մի անգամ Նիանին կանչեց իր ընտանիքի փոքրիկ կապիկներին: Բարձրացնելով ցուցամատը՝ նա այնպես նայեց նրանց, որ փոքրիկները լռեցին:



Նա ասաց. «Անհնազանդությունը վատ հետևանքներ է ունենում: Կա երեք կանոն, որոնք պահպանելով դուք անվտանգ կլինեք»:



Ցուցամատը վեր բարձրացնելով՝ նա արտասանեց. «Առաջին կանոնը. մի՛ կանգնեք զեբրի հետևի ոտքերի մոտ:

Երկրորդը. ընձառյուծի հոտ առնելուն պես անմիջապես բարձրացեք ամենաբարակ ճյուղի վրա: Գիշատչի ստամոքսում հայտնվելը հաստատ ծիծաղելի չէ:



Երրորդը. մի՛ նայեք օձի աչքերին: Եթե հիշեք այս երեք կանոնների մասին, կփրկեք ձեր կյանքը»: Նիանիին շնորհակալություն հայտնելով՝ կապիկներն ամենքը մի կողմ վազեցին:

«Ողջույն, Նիանի՛, – ասաց ընձուղտ Տվիգան, – որքան հիշում եմ՝ դուք ձեր ընտանիքում յոթ հոգի էիք»:

«Տխուր պատմություն է: Մեկը կանգնել էր զեբրի հետևում, երեքը չէին նկատել ընձառյուծին, իսկ երկուսը նայել էին ուղիղ օձի աչքերին: Կենդանի մնացի միայն ես»:

«Իմաստությունը հաղթել է կապիկի խելքին»: «Չհասկացա», – ասաց Նիանին: «Հենց այնպես, բարձրաձայն մտածում էի», – շփոթված պատասխանեց ընձուղտը:

Նրանք նստեցին՝ հսկելով փոքրիկ կապիկներին: Նրանցից երկուսը վազում էին դեպի մարգագետնում արածող զեբրերը: Տվիգան աչքերը ճակատը թռցրեց, իսկ Նիանին ծանր հոգոց հանեց:

Նրանք նկատեցին երկնքում՝ կապիկների գլխավերևում ճախրող ուրուրին: Նիանին հոգոց հանեց. «Ուրուրը միշտ դժբախտության հոտը զգում է»:

«Ինչու՞ չի կարելի կանգնել զեբրի հետևի ոտքերի մոտ», – հարցրեց փոքրիկ կապիկը: «Ծերուկը կարծում է, թե ամենախելացին է: Գնանք, իմանանք», – պատասխանեց քույրը:

Նրանք մոտեցան զեբրին՝ չդադարելով քթի տակ ծիծաղել: Զեբրը ծամում էր խոտը՝ հետզհետե ավելի մոտենալով նրանց:

Այդ ժամանակ փոքրիկ կապիկներից մեկը բարձրացրեց փուշն ու ծակեց զեբրին: Տվիգան ու Նիանին տեսան փոշու ամպն, ապա գետնին թռչող կապիկին:

Նիանին բռնեց գլուխն ու կանչեց Պիլիին, որը հասկանում էր բժշկությունից: Մյուս կապիկը սարսափահար փախավ հորեղբոր մոտ:

«Անհնազանդությունը վատ հետևանքներ է ունենում», – ասաց Նիանին: Այս խոսքերի ճշմարտացիությունը հաստատվեց մինչ արևի մայր մտնելը:

Հանկարծ Տվիգան ընձառյուծի հոտ առավ: Փոքրիկ կապիկներն անմիջապես բարձրացան ամենաբարձր և ամենաբարակ ճյուղերի վրա: Ընձառյուծը ցատկեց ծառի վրա և բարձրացավ վեր:

Նա բացեց երախը և լպստեց բերանը՝ կանխազգալով համեղ ընթրիքի համը: «Պի՛նդ բռնվեք, – բացականչեց Նիանին, – նա ձեզ չի հասնի»:

Ընձառյուծն ահարկու մռնչաց՝ վախեցնելով կապիկներին: Նիանին շարունակում էր գոտեպնդել. «Մնացե՛ք ձեր տեղում, ամեն ինչ լավ կլինի»:

Նիանին բառաբի պտուղներ էր նետում գիշատչի վրա: «Հնազանդությունը պարգևատրվում է», – բացականչեց նա, երբ ընձառյուծը կորավ ջունգլիների խորքում:

Մինչ բոլորն ուրախանում էին հրաշալի փրկության համար, Տվիգան ինչ-որ շարժ նկատեց մեծ քարերի մոտ:

«Նիանի՜, – բացականչեց Տվիգան, – հարկավոր է շտապ ինչ-որ բան ձեռնարկել: Փոքրիկներից մեկը նայում է ուղիղ պիթոնի աչքերին»:

Նիանին վազեց դեպքի վայր: Նա բարձրացավ ժայռի վրա և նայեց ներքև: Օձը դանդաղ սողում էր դեպի զոհը՝ փոքրիկ կապիկը:

Նիանին ժայռից մի քար հրեց, որը վնասեց օձին: Նիանին անմիջապես ցատկեց ցած, վերցրեց փոքրիկին և բարձրացավ ծառը:

Իր հաղթանակից գոհ՝ նա հաղթական սուլեց: Երբ փոքրիկ կապիկը մի փոքր հանգստացավ, Նիանին ասաց.

«Հիմա դուք սեփական փորձով համոզվեցիք, որ հնազանդությունը պարգևատրվում է, իսկ անհնազանդությունը վատ հետևանքներ է ունենում»:

Փոքրիկ կապիկները համաձայնությամբ շարժեցին գլուխները և նայեցին այն տեղին, որտեղ դեռ երեկ նստած էր իրենց եղբայրը, որն ընկավ զեբրի սմբակի տակ:



Նրանք մտածեցին և նորից գլխով արեցին: Սակայն Նիանին գիտեր, որ փոքրիկ կապիկների հիշողությունը նույնքան կարճ է, որքան ընձառյուծի համբերությունը:

– Նույնիսկ կապիկների համար է կարևոր հնազանդությունը, – ամփոփեց Դաուդին, – իսկ մարդկանց համար, որոնք ուզում են հայտնվել Երկնային Արքայությունում, կարևոր է հիշել, որ հնազանդությունը գլխավորն է այն ամենից, ինչ Աստված սպասում է իրենցից: Աստվածաշնչում գրված է. «Նա, ով ասում է, թե՝ ճանաչում եմ Նրան, բայց Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և նրա մեջ ճշմարտություն չկա»: Իսկ ով կատարում է Աստծո պատվերները, նա իր վարքով հաստատում է, որ սիրում է Տիրոջը: Հնազանդությունը դրա ապացույցն է:

Մգոգոն սուլոցով կանչեց շնիկին: Նա կանգ առավ, շրջվեց և, պոչը տարուբերելով, վազեց տիրոջ մոտ:

Դաուդին, Հովհաննեսն ու Մգոգոն իրար նայեցին և խրախուսական հայացքով գլխով արեցին:

– Հիշի՛ր, – ասաց Դաուդին Մգոգոյին՝ շոյելով քոթոթին, – Հիսուսը ևս ասել է. «Եթե սիրում եք Ինձ, պահե՛ք Իմ պատվիրանները»:

Շարունակելի…

Յուսիկ Մուսիկյան, տպիչ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԵՆԱԳ ԼԵԶՈՒ, ԿԱՄԲՈՋԱ

Բլից փաստեր Կամբոջայի մասին.

Բնակչությունը.
16 245 729

Հիմնական լեզուն.
ԿՀՄԵՐԵՐԵՆ

Հիմնական կրոնը.
ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզուների թիվը
26

Այն լեզուները,
որոնցով թարգմանված չէ
Աստվածաշունչը. **10**
որոնցով Աստվածաշունչը
թարգմանված է մասամբ. **3**
որոնցով թարգմանված է Նոր
Կտակարանը. **2**
որոնցով թարգմանված է ողջ
Աստվածաշունչը. **11**



Իսկ դու գիտե՞ս

Կամբոջայում արևադարձային կլիմա է: Տարվա մեծ մասը երկրում անձրև է գալիս: Երբ Ասիայում սկսվում է տեղատարափ անձրևների շրջանը, ջրով են ողողվում երկրի մեծ տարածքներ: Մեկոնգ գետը անձրևների շրջանում այնքան ջրառատ է դառնում, որ մոտակա դաշտերն ամիսներ շարունակ ջրով է ողողում (տարվա մեջ չորսից յոթ ամիս): Դա ջրի շատ մեծ քանակություն է:

Կամբոջայի տեսարժան վայրերից մեկը Անգկոր Վատ տաճարն է: Ավանդության համաձայն՝ այն կառուցվել է XII դարում՝ Սուրյավարման II թագավորի օրոք: Դրա ամենաբարձր աշտարակը ձգվում է 42 մետր:

Շուրջ 30 տարի է անհրաժեշտ եղել այդ հրաշալի շինությունը կառուցելու համար: Անգկոր Վատին հեռվից նայելու դեպքում կարող է թվալ, թե դա ընդամենը քարե պարզ շինություն է: Բայց մոտենալով կտեսնես, որ այն կազմված է բազմաթիվ աշտարակներից, սյուներից, պատշգամբներից և ներքին բակերից: Պարզապես զարմանալի է:

Սակայն վերադառնանք Կամբոջայի մասին այլ փաստերի: Երկրի հիմնական լեզուն կիմերերենն է: Գրեթե բոլոր տեղացիները խոսում են այդ լեզվով: Կամբոջայում մարդկանց մեծամասնությունը բուդդայական է (Ասիայի հիմնական կրոնը): Ասիայի շատ երկրներում շատ վտանգավոր է քրիստոնյա լինելը: Նախկինում այդպես էր նաև Կամբոջայում:

Բայց այսօր մարդկանց թույլատրված է հավատալ նրան, ինչին իրենք ուզում են և պատմել մտերիմներին Հիսուսի մասին: Աստվածաշնչի գրքերից շատերը արդեն թարգմանված են Կամբոջայի լեզուների մեծ մասով: Այդ թվում և 70000 մարդու համար, որոնք խոսում են կենտրոնական մնոնգ լեզվով: Դու կարող ես աղոթել, որ ավելի շատ մարդ հավատա Հիսուսին և կարողանա իր մտերիմներին պատմել հրաշալի լուրն այն մասին, որ Աստված սիրում է իրենց:

Դու կարող ես աղոթել...

Նոր Կտակարանի կեսից ավելին արդեն թարգմանվել է մնոնգ լեզվով և 1000-ից ավելի գրքույկ է վաճառվել Սուրբ Գրքից վերցված հատվածներով: Մարդիկ սկսում են կարդալ Աստվածաշունչը և փառաբանական երգեր են գրում իրենց մայրենի լեզվով: Դու կարող ես աղոթել, որ թարգմանիչներն ավարտեն Նոր Կտակարանի վրա աշխատանքը և որ բազմաթիվ մարդիկ Կամբոջայում իմանան Աստծո մասին: Դու կարող ես աղոթել նաև, որ այդ երկրի ժողովուրդը բավականաչափ սնունդ և հագուստ ունենա, որ Աստված հոգա նրանց համար:

ԱՂՈԹՔԻ 30 ՕՐ

«Աղոթք անելիս ինչ որ խնդրեք, հավատացե՛ք, թե կստանաք ու կտրվի ձեզ»
Մարկ. 11.24

1
Կարդա՛ աստվածաշնչյան հատվածը. Ղուկ. 11.1-2: Աղոթքով փառաբանի՛ր Աստծուն:

2
Կազմի՛ր լավ դեպքերի ցանկ, որոնք վերջերս տեղի են ունեցել քո կյանքում կամ կատարվում են հիմա: Շնորհակալությու՛ն հայտնիր Տիրոջը դրանց համար:

3
Միասնական աղոթքի համար ընկե՛ր գտիր:

4
Կարդա՛ աստվածաշնչյան տեքստը. Ես. 9.6: Ընտրի՛ր Աստծո անուններից մեկը և այսօր Նրան այդ անունո՛վ դիմիր:

5
Աստծուն հա՛րց գրիր: Աղոթի՛ր, որ Նա քեզ պատասխանի:

6
Կարդա՛ «Հայր մեր» աղոթքը (Մատթ. 6.9-13) և այն անգի՛ր սովորիր:

7
Աղոթի՛ր ամբողջ աշխարհում հալածանքներ կրող քրիստոնյաների համար:

8
Աղոթի՛ր Աստվածաշնչի թարգմանիչների համար:

9
Մեզ նամա՛կ ուղարկիր հետևյալ հասցեով – arahetarm@yandex.ru Պատասխան նամակում մենք քեզ կգրենք միսիոների անուն, որի համար դու կարող ես աղոթել:

10
Աղոթի՛ր քո մայրիկի համար: Նրան նամա՛կ գրիր: Ասա՛, թե ինչու ես դու նրան սիրում և ինչի համար ես շնորհակալ իրեն:

11
Ուշադիր նայի՛ր հայելուն: Ի՞նչ գույնի են քո աչքերը: Շնորհակալությու՛ն հայտնիր Աստծուն նրա համար, որ Նա քեզ այսքան հիասքանչ է ստեղծել:

12
Կարդա՛ աստվածաշնչյան հատվածը. Հռոմ. 8.15-16: Ի՞նչ է նշանակում «Աբբա» բառը: Աղոթքում Աստծուն «հայր» անվանիր:

13

Աղոթի՛ր քո հայրիկի համար: Աշխատանքից հետո հարցրու՛ նրան, թե ինչով է այսօր զբաղվել և ինչպես է անցել նրա օրը:



14

Գրի՛ր դպրոցի բոլոր ուսուցիչներիդ անունները: Աղոթի՛ր նրանցից յուրաքանչյուրի համար:

15

Իմացի՛ր, թե ինչպես է կոչվում քո եկեղեցին և ինչու են այն այդպես անվանել: Աղոթի՛ր քո եկեղեցու համար:

16

Նայի՛ր հին ընտանեկան լուսանկարչական ալբոմները: Աղոթի՛ր քո ընտանիքի ամեն անդամի համար:

17

Պատրաստի՛ր թխվածքաբլիթ (բաղադրատոմսը 28 էջում է): Շնորհակալությունն հայտնիր Աստծուն համեղ կերակրի համար:

18

Այսօր աղոթի՛ր մեր՝ «Արահետի» թիմի համար, որ Աստված մեզ իմաստություն ու լավ գաղափարներ տա ամսագրի համար:

19

Կազմի՛ր ամենամտերիմ ընկերներիդ ցանկը: Աղոթի՛ր նրանց համար: Եթե կարող ես, ապա հյուր գնա այսօր նրանց, հաղորդագրությունն ուղարկիր կամ զանգահարի՛ր:

20

Արդյոք գիտե՞ս, թե ինչ է քո երկրի նախագահի անունը: Եթե ոչ, ապա իմացի՛ր: Աղոթի՛ր նրա համար, որ Աստված նրան իմաստություն տա:

21

Գնա դուրս և շուրջդ նայիր: Ի՞նչ ես տեսնում: Շնորհակալությունն հայտնիր Աստծուն՝ հրաշալի ստեղծագործության համար:

22

Աղոթի՛ր տատիկներիդ և պապիկներիդ համար: Զանգահարի՛ր կամ գրի՛ր նրանց:

23

Ինչի՞ մասին ես ամենից շատ երազում: Նկարի՛ր կամ նկարագրի՛ր երազանքդ թղթի վրա և աղոթի՛ր, որ Աստված իրականացնի քո երազանքը:

24

Կարդա՛ աստվածաշնչյան համարը. Մատթ. 7.7: Գրի՛ առ այն քարտի վրա և անգի՛ր սովորիր:

25

Գրությունն գրիր քո եղբորը կամ քրոջը (եթե դու քույր կամ եղբայր չունես, ապա գրի՛ր ընկերոջդ) և գաղտնի դի՛ր այն նրա պայուսակի մեջ: Այսօր աղոթի՛ր քո եղբայրների ու քույրերի համար:

26

Ինչի՞ մասին էր վերջին դասը կիրակնօրյա դպրոցում: Աղոթի՛ր կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների համար:

27

Կարդա՛ Սաղմոս 8-ը: Փառաբանի՛ր Աստծուն Իր մեծության համար:



28

Եթե քեզ ինչ-որ մեկը նեղացրել է, աղոթի՛ր այդ մարդու համար, մոտեցի՛ր նրան ու ասա՛, որ ներում ես իրեն:

29

Շնորհակալությունն հայտնիր Աստծուն Հիսուս Քրիստոսի համար և նրա համար, որ Նա ներել է քո մեղքերը:

30

Հիշողությամբ կարդա՛ «Հայր մեր» աղոթքը:

ՍԻՐԵՏ

Վերծանի՛ր աստվածաշնչյան համարը և իմացի՛ր, թե մենք ինչ պետք է անենք միշտ:



Բանալին



Կազմեց Դավիթ Հարությունյանը

ԽԹԱՆԻՆ ԱՔԱՑԻ ՏԱԼ

Վարվառա Նասոն

Դու երբևէ կով տեսե՞լ ես: Գուցե, ոչ մեկը, այլ մի ամբողջ նախիր: Երբ կովերը մարգագետնում արածում են, նրանք իրենց ազատ են զգում: Բայց երբեմըն, երբ հարկավոր է նրանց գոմ քշել, նրանք չեն ուզում գնալ: Եվ նրանց դրան դրդելու համար հովիվներն օգտագործում են խթանը: Խթանը սրածայր փայտ է, որով քշում են կենդանիներին:

Երբ կովը չի ուզում հնազանդվել հովվին, նրան ծակում են խթանով: Երբ հարկավոր է, որ նա գնա դեպի ձախ, ծակում են աջ կողը, և ընդհակառակը: Կենդանին հատուկ խթանի կողմը չի գնա: Նա լսում է: Ինչու՞ ցավ զգա: Մարդիկ խթանն օգտագործել են դեռ վաղնջական ժամանակներում: Դրա մասին հիշատակում կարելի է գտնել նաև Աստվածաշնչում:

Կարդանք Գործք Առաքելոց գրքի 9-րդ գլուխը: Երբ Սավուղը գնում էր Դամասկոս քաղաքը, որպեսզի հալածեր քրիստոնյաներին, նրա ճանապարհին հանկարծ պայծառ լույս շողաց: Նա ընկավ գետնին ու մի ձայն լսեց. «Սավու՛ղ, Սավու՛ղ, ինչու՞ ես Ինձ հալածում»:

Սավուղը ոչինչ չհասկացավ և այդ պատճառով էլ վախեցած հարցրեց. «Ո՞վ ես Դու, Տե՛ր»: Եվ Տերն ասաց նրան. «Ես Հիսուսն եմ, Ում դու հալածում ես, – ապա ավելացրեց, – դժվար է քեզ համար խթանին աքացի տալը»: Իրոք, կարո՞ղ է մարդը պայքարել Աստծո դեմ: Չէ՞ որ Աստված անհամեմատ ավելի ուժեղ է:

Այդ տեսիլքից հետո Սավուղը կուրացավ: Նրան Դամասկոս հասցրեցին այլ մարդիկ: Այնտեղ Սավուղը կրկին սկսեց տեսնել ու սկսեց քարոզել Քրիստոսի մասին: Մենք նրան ճանաչում ենք որպես Պողոս առաքյալ:

«Խթանին աքացի տալ» արտահայտությունը նշանակում է ընդառաջ գնալ վտանգին, դեմ գնալ նրան, ով քեզանից ուժեղ է:

ԿՈԿԱ-ԿՈԼԱ

Հայկը շատ էր սիրում կոկա-կոլա: Մի անգամ մայրիկը խանութից եկավ և Հայկի համար մի շիշ նրա սիրելի ըմպելիքից բերեց: Հայկը շատ ուրախացավ: Բայց մայրիկն անմիջապես ասաց.

– Դեռ մի՛ խմիր, այն շատ սառն է, կոկորդդ կարող է ցավել: Ճաշից հետո կվերցնես:

Դե ահա: Հայկը տխրեց, բայց հնազանդորեն պատասխանեց.

– Լավ, մայրի՛կ:

Սակայն կոկա-կոլայի մասին միտքը Հայկին հանգիստ չէր տալիս: Նա իր սենյակում մի անկյունից մյուսն էր գնում: Ո՛չ վիդեոխաղերը, ո՛չ գրքերը, ո՛չ էլ նույնիսկ «Լեգո» կոնստրուկտորը չէին կարողանում շեղել նրան կոկա-կոլայի մասին մտածելուց:

Չդիմանալով, Հայկը կամացուկ դուրս եկավ սենյակից: Տեսնելով, որ մայրիկը ծաղիկներն է ջրում, Հայկը ոտքի մատների վրա թաքուն գնաց խոհանոց, դարակից վերցրեց կոկա-կոլան և թաքնվեց իր սենյակում: Նա վայրկենապես ամբողջ շիշը խմեց: Հիմա նա գոհ էր:

Մայրիկը նկատեց, որ որդին իրեն չհնազանդվեց, և շատ տխրեց: Երեկոյան Հայկի կոկորդը սկսեց ցավել:

Հայկը շատ էր սիրում կոկա-կոլա: Մի անգամ մայրիկը խանութից եկավ և Հայկի համար մի շիշ նրա սիրելի ըմպելիքից բերեց: Հայկը շատ ուրախացավ: Բայց մայրիկն անմիջապես ասաց.

– Դեռ մի՛ խմիր, այն շատ սառն է, կոկորդդ կարող է ցավել: Ճաշից հետո կվերցնես:

Դե ահա: Հայկը տխրեց և անմիջապես սկսեց վրդովվել, ասել, որ կոկա-կոլան այնքան էլ սառը չէ, իսկ ինքն ամուր առողջություն ունի: Այդպես նա փնթփնթաց մինչև ճաշ: Սակայն, թեև նա դժգոհ էր, բայց կոկա-կոլային մոտ չգնաց:

Երբ Հայկին վերջապես թույլ տվեցին խմել ըմպելիքը, դա նրան առանձնապես հաճույք չպատճառեց: Տրամադրությունն ընկած էր: Մայրիկը տխրել էր, որ որդին այդքան բարկանում էր: Հայկը մինչև ճաշը չխմեց կոկա-կոլան, բայց դա բոլորի տրամադրությունը փչացրեց, այդ թվում՝ նաև իրենը:

Հայկը շատ էր սիրում կոկա-կոլա: Մի անգամ մայրիկը խանութից եկավ և Հայկի համար մի շիշ նրա սիրելի ըմպելիքից բերեց: Հայկը շատ ուրախացավ: Բայց մայրիկն անմիջապես ասաց.

– Դեռ մի՛ խմիր, այն շատ սառն է, կոկորդդ կարող է ցավել: Ճաշից հետո կվերցնես:

Դե ահա: Հայկը սկզբում տխրեց, բայց հետո հնազանդորեն պատասխանեց.

– Լավ, մայրի՛կ:

Վերադառնալով իր սենյակ՝ նա շարունակեց կարդալ կետերի մասին հոդվածը: Ա՜յ թե հսկաներ են նրանք: Հայկն այնքան կլանված էր, որ նույնիսկ չնկատեց, թե մինչև ճաշը ժամանակն ինչպես թռավ:

– Ճաշը պատրաստ է, – կանչեց մայրիկը Հայկին:

Համեղ ուտելուց հետո Հայկն արտահայտիչ հայացքով նայեց մայրիկին: Նա հասկացավ որդուն առանց բառերի և միայն գլխով պատասխանեց «այո»:

Հայկը ցատկեց տեղից, վերցրեց կոկա-կոլան, բացեց այն և մի կում խմեց սիրելի ըմպելիքից:

– Շնորհակալություն, մայրի՜կ, – հիացմունքով ասաց Հայկը:

– Խնդրեմ, – պատասխանեց մայրիկը՝ ժպիտով նայելով որդուն:

Ելենա Միխայլովա - Ռոդինա

Պատմությունների ներքևում դի՛ր համապատասխան դեմքերը: Քեզ ո՞րն ավելի շատ դուր եկավ:

ԿԻՏԻԻ ՍԻՐՈՒՆ ԱԿԱՆՋՆԵՐԸ

Օլեսյա Իսահակ

Կիտին շատ սիրուն ականջներ ուներ: Նրա ականջները մեծ էին, սրածայր ու մոխրագույն՝ աղվամազերով պատված ծայրերով: Կիտին սիրում էր դրանցով հիանալ՝ հայելուն նայելով:

– Ի՜նչ սիրուն են քո ականջները, – ասում էր նրան մայրիկը՝ թաթով դրանք մաքրելով:

Երբեմն մայրիկը նրա ականջներին գեղեցիկ վարդագույն ժապավեններ էր կապում: Այդ ժամանակ բոլորը հիացմունքով էին նայում Կիտիին: Դա նրան շատ էր դուր գալիս:

Սակայն Կիտիի ականջները միայն գեղեցկության համար էին, որովհետև նա չէր կարողանում դրանք ճիշտ օգտագործել: Նա լսում էր, թե ինչ էին իրեն ասում ծնողները, բայց գրեթե երբեք չէր հնազանդվում նրանց:

Երբ մայրիկն ասում էր. «Չմոռանաս թաթիկներդ լպստել զբոսնելու գնալուց առաջ», Կիտին միշտ մոռանում էր դա անել: Իսկ եթե հայրիկն ասում էր. «Տնից շատ հեռու չգնաս, շուտով անձրև է գալու», Կիտին միշտ հայտնվում էր բակի ամենահեռավոր անկյունում, երբ անձրևի առաջին կաթիլներն ընկնում էին գետնին:

– Դու պիտի հնազանդվես, – ասում էր հայրիկը:

– Օգտագործի՛ր ականջներդ, – հիշեցնում էր մայրիկը:

Բայց Կիտին չէր լսում:

Մի անգամ ցերեկը նա ցանկացավ այգում խաղալ:

– Շատ անանուխ չուտես, – զգուշացրեց մայրիկը՝ մինչ Կիտին դուրս կգար, – փորիկդ կցավի:

– Եվ բակից դուրս չգաս, – ավելացրեց հայրիկը, – հարևան բակում շուն կա:

– Լա՜վ, – բացականչեց Կիտին՝ տանից դուրս փախչելով:

Նա թավալվեց խոտերի մեջ՝ վայելելով արևը: Ապա փորձեց բռնել կողքին թռնող մժեղներին: Հետո խաղաց իր խաղալիքներով: Եվ, իհարկե, Կիտին չափազանց շատ անանուխ կերավ: Երբ կշտացավ, նա պառկեց խոտին՝ տաքանալով արևի տակ: «Էլ ինչո՞վ զբաղվեմ», – մտածեց Կիտին:

Հանկարծ նա նկատեց ճանապարհին վազող մկնիկին: «Հապա, փորձեմ նրան բռնել», – մտածեց Կիտին և առաջ նետվեց:

Նա մկնիկի հետևից վազեց այգով մեկ, ծաղկաթմբերի միջով, ծառի շուրջը, հետո նրա հետևից անցավ ցանկապատի անցքի միջով: Կիտին մկնիկի հետևից վազում էր ճանապարհով, եգիպտացորենի դաշտով և նույնիսկ նրա հետևից վազելով անցավ ոչ խորը գետակի վրայի գերանը: Վերջապես մկնիկը թաքնվեց մեծ կարմիր ամբարի չոր խոտի մեջ:

– Ա՜խ, – բարկացած բացականչեց Կիտին, – փախա՜վ:

Նա շրջվեց, որ տուն գնար և հանկարծ հասկացավ, որ բոլորովին չի հիշում տունդարձի ճանապարհը: Նա դեռ երբեք այդքան հեռու չէր գնացել տնից:

«Ո՞ր կողմ թեքվեցի ես, երբ թռա գերանի վրայից, – հարցնում էր նա ինքն իրեն, – ո՞ր կողմում է եգիպտացորենի դաշտը: Եվ ինչու՞ է փորիկս այսպես ցավում»:

Կիտին պառկեց մեծ կաղնու ստվերում:

– Մյաու՜, – սկսեց լացել նա, – ի՜նչ ուժեղ է ցավում փորիկս: Չեմ կարողանում շարժվել: Մայրիկի ու հայրիկի մոտ եմ ուզո՜ւմ: Մյաու՜, մյաու՜, մյաու՜...

Հայրիկն ու մայրիկը նրան չլսեցին: Բայց հարևանությամբ ապրող շունը լսեց: Նա վազեց դեպի մեծ կաղնին:

– Հա՜ֆ, – հաչեց նա, տեսնելով Կիտիին, և լայն բացեց մեծ ու սուր ատամները:

– Խը՜շ, – պատասխանեց Կիտին և վեր թռավ:

Նրա մեջքի մորթին բիզ-բիզ կանգնեց, իսկ պոչիկը վեր ձգվեց: Վախեցած Կիտին պուկ տվեց գետակի կողմը, շունը՝ նրա հետևից:

«Ախր որտե՞ղ է այդ գերանը», – անդադար փորձում էր գտնել Կիտին:

Նա վազեց ափի երկարությամբ, բայց գերանն այդպես էլ չգտավ:

«Ստիպված եմ լողալ, – մտածեց խեղճ Կիտին, – տանել չեմ կարողանում ջուրը»:

Թաթիկը գետը մտցնելով՝ նա ծամածռվեց և իսկույն դուրս հանեց այն: Բայց շունը մոտենում էր: Այդ ժամանակ, աչքերը փակելով, Կիտին նետվեց ջուրը: Նա մի կերպ լողաց ու դուրս եկավ մյուս ափ՝ ցրտից դողալով:

– Ջուրը կկանգնեցնի շանը, – ասաց նա՝ վրայից թափ տալով ջուրը:

Սակայն նրան հետապնդող շունը ոչ մի վայրկյան չդանդաղեց, նետվեց ջուրն ու լողաց դեպի Կիտին: Շները, ի տարբերություն կատուների, ջրից բոլորովին չեն վախենում:

Կիտին ցատկեց տեղից և վազեց եգիպտացորենի դաշտով: Նա վազում էր շրջանաձև՝ չիմանալով, թե որ կողմում է իր տունը: Վերջապես նա գտավ ցանկապատը, բայց անցքը, որով դուրս էր եկել բակից, չհասցրեց գտնել: Շունը հաչելով և գոռալով հասավ նրա հետևից: Այդ ժամանակ Կիտին փորձեց մագլցել ցանկապատի վրա, բայց այն այնքան բարձր էր, որ նրան չհաջողվեց բարձրանալ:

Փրկվելով հետապնդողից՝ Կիտին բարձրացավ ծառը: Այդ մեկը շները չեն կարողանում: Շունը կանգնել էր գետնին ու հաչում էր:

«Դե ահա, – տխրեց Կիտին, – կարծես թե մնացի այստեղ: Ստիպված եմ գիշերել ծառին: Հարկավոր էր լսել մայրիկին ու հայրիկին»:

Նստելով ճյուղին՝ նա սրեց ականջները: Հենց նույն պահին նա լսեց, թե ինչպես են ծնողները իրեն կանչում: Կիտին մագլցեց ավելի վեր և բղավեց.

– Մայրի՜կ, հայրի՜կ: Ես այստե՜ղ եմ, մյաու՜:

Վախեցած ծնողները գոռում էին ցանկապատի մյուս կողմից.

– Ցատկիր ցանկապատի՛ն:

Կիտին լսեց նրանց:

– Ցանկապատի եզրով գնա՛ մինչև ցախանոց, – շարունակում էր հայրիկը:

Կիտին հնազանդվեց:

– Իսկ հիմա ցատկի՛ր գետնին, – բացականչեց մայրիկը:

Եվ Կիտին կրկին հնազանդվեց:

Երբ նրանք բոլորով արդեն տանն էին, մայրիկը Կիտիին օգնեց մաքրել մորթին: Հայրիկը նրան տաք կաթ տվեց, որ փորիկն այլևս չցավեր: Հետո ծնողները նրան բացատրեցին, թե ինչու չի կարելի շատ անանուխ ուտել և բակից հեռու գնալ: Այս անգամ Կիտին ուշադրությամբ լսում էր նրանց:

Երեկոյան, երբ մայրիկը Կիտիին խնդրեց լվացվել ընթրիքից առաջ, նա հնազանդորեն լպստեց թաթիկները: Իսկ երբ հայրիկն ասաց, որ քնելու ժամանակն է, Կիտին հնազանդորեն ցատկեց փափուկ բարձի վրա և պատրաստվեց քնելու:

Կիտիի ականջներն արդեն պարզապես շատ սիրուն չէին: Դրանք արդեն կարողանում էին լավ լսել:

ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

Օգնի՛ր Կիտիին տուն հասնել:

Մարիաննա Մինասյան

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱԿԱՆՋՔՆԵՐԸ

Օլգա Մարտինովա

Իսկ դու գիտե՞ս, որ դելֆինները աշխարհին «նայում են» լսողության միջոցով: Նույնիսկ բյուրեղյա մաքրությամբ ջրում տեսողությունը 10-20 մետր է: Այդ պատճառով դելֆինները, որպես ծովերի տերեր, օգտագործում են հատուկ բարձր հաճախականության ազդանշաններ, որպեսզի «տեսնեն»: Դա կոչվում է ուլտրաձայն: Նետված սեղանի թենիսի գնդակի նման ուլտրաձայնը հասնում է օբյեկտին և «հետ է դառնում» դրանից հավաքված տեղեկությամբ: Դա այսպես կոչված արձագանքն է: Դելֆինը վերադարձած ձայնը «որսում է», չես հավատա, բայց ատամներով և դնչի միջոցով փոխանցում է ականջին:

Իսկ դու գիտե՞ս, որ չղջիկները ևս վարպետորեն տիրապետում են ուլտրաձայնին: Նրանց ձայնատեղորոշումն այնքան հստակ է, որ կարող է հետևել թռչող մոծակին: Ամեն վայրկյան չղջիկներն իրենց առջևից ուղարկում են մինչև 60 ուլտրաձայնային ազդանշան: Անհավանական զգայունությունը նրանց թույլ է տալիս շրջանցել ճգած թելը՝ առանց թռիչքի արագությունն իջեցնելու: Սակայն գոյություն ունեն միջատներ (օրինակ՝ թիթեռները), որոնք կարող են չղջիկներից փրկվել սեփական ուլտրաձայնի միջոցով:

Իսկ դու գիտե՞ս, որ բվերի մի ականջը մյուսից մի փոքր վեր է տեղակայված: Նման անհամաչափությունը (ասիմետրիա) բվերին թույլ է տալիս որսալ ձայները բոլոր ուղղություններով: Թռչուններն արտաքին ականջախեցի չունեն, և բվերը բացառություն չեն, այդ պատճառով դրա գործառույթն իրականացնում են գլխի դիմային մասի փետուրները: Այդ փետուրները «հավաքում են» ձայնն ու ուղարկում են այն ականջներ: Բվերը գիշերային որսորդներ են, նրանց հիասքանչ տեսողությանը լրացնում է սուր լսողությունը, ինչը նրանց թույլ է տալիս անսխալորեն կերակուր հայթայթել գիշերվա խավարում:

Իսկ դու գիտե՞ս, որ շան ականջն ունի 18 տարբեր մկաններ: Ձիերի դեպքում դրանք ընդամենը 10-ն են, իսկ մարդու ականջում միայն 3 մկան կա: Դու փորձե՞լ ես շարժել ականջներդ: Դա այդքան էլ հեշտ չէ: Իսկ հիմա հիշի՛ր շներին. նրանց գեղեցիկ ականջները բարձրանում են, թեքվում են և ճկվում: Իսկ կատվի ականջն ունի նույնիսկ 32 մկան: Այդ պատճառով նա կարող է ականջները հետ ու առաջ թեքել և նույնիսկ պտտել դրանք 180 աստիճան:

Իսկ դու գիտե՞ս, որ ձկներին երկար ժամանակ խուլ էին համարում: Այո, նրանց մոտ բացակայում է արտաքին ականջը, ինչը հասկանալի է: Կարո՞ղ ես պատկերացնել պերկես ձկանը՝ գլխին կատվի նման ականջներով, որը լողում է, որպեսզի փրկվի գայլաձկան հետապնդումից: Ձկները չունեն միջին ականջ, որից ունեն ցամաքային կենդանիները: Փոխարենը ունեն ներքին ականջ: Այն միացված է լողափամփուշտին, որը կատարում է թմբկաթաղանթի գործառույթը: Հնում բրամի ձվադրման շրջանում արգելում էին զանգ հնչեցնելը, որովհետև բրամը հատկապես դյուրազգաց է այդ շրջանում և վախենում է նույնիսկ աննշան աղմուկից: Ուրեմն, արդյո՞ք ձկները լսում են: Իհարկե, լսում են, անգամ չկասկածես:

Իսկ դու գիտե՞ս, որ փղերը կարող են որսալ ամպրոպի որոտը 100 կմ հեռավորությունից: Փղերի հսկայական ականջները շատ շարժուն են, և կենդանիներն անընդհատ թափահարում են դրանք: Դա կապված է օրգանիզմի հովացման հետ, ինչպես նաև օգնում է իրենց ցեղակիցների հետ շփման հարցում: Ականջների շարժումներով փղերը և՛ սպառնում են թշնամիներին, և՛ ողջունում են ազգակիցներին: Փղի մեծ ականջները ուղարկում են ձայնային ալիքներ և կարող են որսալ նվազ հաճախականության ձայներ: Դրանց օգնությամբ փղերը «զրուցում են» իրար հետ մեծ հեռավորության վրա:



ՔԱՂՑՐԱԲԼԻԹԵ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաղադրատոմս

Քեզ հարկավոր է

150 գր. սերուցքային կարագ (փափուկ)

160 գր. շաքարավազ

1 ձու

225 գր. ալյուր

0.5 տուփ փխրեցուցիչ

2 պտղունց աղ

200 գր. շոկոլադի փոքր կտորներ

Պատրաստման եղանակը

1. Ջեռոցը տաքացրու՛ 190⁰: Տապակի մեջ թխելու համար նախատեսված թուղթ դիր, կամ կարագ քսիր թավայի մեջ:
2. Ամանի մեջ խառնի՛ր կարագն ու շաքարավազը՝ մինչև համասեռ զանգված ստացվի:
3. Ամանի մեջ վանիլային շաքա՛ր ավելացրու:
4. Ամանի մեջ ավելացրու՛ ալյուրը, փխրեցուցիչն ու աղը:
5. Ավելացրու՛ շոկոլադե կտորները:
6. Ճաշի գդալով վերցրու՛ ստացված խմորից մի փոքր, դրանից գնդի՛կ պատրաստիր, դի՛ր տապակի մեջ և պատառաքաղով սեղմի՛ր, որ այն տափակի:
7. Թխվածքը եփի՛ր 8-10 րոպե՝ մինչ այն կողքերից թեթևակի շագանակագույն դառնա:

Բարի ախորժակ

Մատուցիր այն կաթով

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Թամարա Լամբրիանովա

Սուրբ ծննդյան լուռ գիշերում,
Շուրջը լույսեր են շողշողում,
Եվ ամեն ցոլք մի նոր սպասում
Ու խնդություն է պարգևում:

Ինչպես ցնծաց երկինքն այնժամ,
Երբ Տեր Հիսուսն աշխարհ եկավ,
Այնպես մենք ենք ցնծում հիմա
Իր փառավոր Սուրբ ծննդյամբ:

Քանզի գիտենք խորհուրդն օրվա
Ու նպատակը հաղթական:
Չէ՞ որ Հիսուս ծնունդ առավ,
Որ կատարվեր խոստումը թանկ:

Դարեր առաջ մեր Հայր Աստված
Տեսավ մարդուն Իր արարած,
Որի սրտում չար սատանան
Մեղքի սերմ էր գցել հանկարծ:

Ու սերմերն այդ ծիլ տվեցին,
Սերունդներին փոխանցվեցին.
Մարդն հեռացավ Հայր Աստծուց
Ու գլորվեց անդունդն այն խոր:

Բայց ողորմած ու գթառատ,
Անհուն սիրով հարուստ Աստված
Չկամեցավ իր ստեղծածին
Տեսնել նվաստ, մեղքի գերի:

Նա մեկնեց ձեռքն Իր հայրական
Ու պարգևեց միակ ճամփան,
Որ տանում է մեզ փրկության,
Մեր Արարչի հետ հաշտության:

Այդ ուղին է մանուկ Հիսուսն՝
Աստծո Որդին արդար ու Սուրբ,
Որ կոչված էր Քրիստոս՝ օծյալ,
Որպես փրկիչ մեզ խոստացված:

Նա մարդացավ Իր Հոր կամքով,
Որ դառնար լույս մեզ խավարում,
Որ մեզ դարձներ գիրկն Հայր Աստծո,
Հաներ մեղքի անդունդից խոր:

Ու թե այսօր մեր սրտերում
Դեռ չի ապրում մանուկ Հիսուս,
Թող ընդունենք Փրկչին օծյալ
Ու Իր տված կյանքն հավիտյան:

Ես Լենա Մարտիրոսյանն եմ 13 տարեկան, ապրում եմ Արարատ քաղաքում: Ամսագրի մեջ ինձ շատ է դուր եկել՝ ուսուցողական խաղերը, հոգևոր պատմվածքները, խաչբառերը, ոսկեղեն համարները:

Այս մանկական քրիստոնեական ամսագիրը ինձ և եղբորս սովորեցրել է ներել, սիրել, զիջել, համբերել և ավելի շատ հաղորդակցվել Աստծո հետ:

Լենա Մարտիրոսյան 13տ. ք. Արարատ

Թանկագի՛ն ընթերցող, դու ունե՞ս սիրելի ասվածաղնվյան համար: Գրի՛ր մեկ և պատմի՛ր, թե ինչու է այն քեզ դուր գալիս: Մենք ուրախ ենք քո յուրաքանչյուր նամակի համար:

Ի՞նչ պատմություն է նկարագրել մեր ընթերցողը:

Այոնա Սավչենկո, 11 տ., ԱՄՆ

Արահետ 1/21 (19)

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» Բարեգործական հասարակական կազմակերպություն: Մանկական քրիստոնեական ամսագիր: Լույս է տեսնում տարեկան 6 անգամ

ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ռուսերեն լեզվով ամսագիրը հրատարակվում է 1990թ.: Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, ղրղզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն: 2018թ. - ից՝ նաև հայերեն:

Տպագրվում է կամավոր նվիրատվությունների միջոցով, բաժանվում է անվճար:

Գլխավոր խմբագիր՝ Վալդեմար Ցորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Թամարա Լամբրիանովա

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ» ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

էջ 6. Լուսանկարը՝ © unsplash.com
էջ 10-13. © Paul White Productions
էջ 14-15. © Wycliffe USA, Praying Around the World with Kate and Mack ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան
էջ 18. © Wycliffe USA, Praying Around the World with Kate and Mack
էջ 26-27. Լուսանկարը՝ © unsplash.com
էջ 28. Լուսանկարը՝ © unsplash.com

Ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Դավիթ Հարությունյանի

Կազմի լուսանկարը՝ © *Yuganov Konstantin / shutterstock.com*

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

Աստվածաշնչյան մեջբերումները վերցված են «ԱՐԱՐԱՏ» և «TBS» թարգմանություններից:

© «Լույս Արևելքում», 2021թ.

www.lio.ru/tropinka

ՄԱԳԱՂԱԹ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթուր Յակովենկո, 7տ., Ուկրաինա



Պոլինա Ումարովա, 10տ.

Պատասխաններ

էջ 2. Հնազանդություն:

էջ 7. Եթե հնազանդվեն ու Նրան ծառայեն, նրանց օրերը բարեկեցությամբ, իսկ տարիներն ուրախությամբ կանցնեն: Հոբ 36.11:

էջ 18. Միշտ ուրա՛խ եղեք: Անդադար աղոթեցե՛ք: Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով: 1 Թես. 5.16-18:

էջ 30. Հոբի պատմությունը:

էջ 32. Սուրճ - մուրճ, վառարան - բառարան, տանիք – ժանիք, չամիչ – քամիչ, գանձ – տանձ, փայտ - պայտ:

ՄԵԿ ՏԱՌԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նկարներն այս լա՛վ նայիր,
Լինի գազան, միրգ թե իր,
Թե փոփոխես գեթ մեկ տառ,
Կստանաս դու մեկ այլ բառ:

Օրինակ՝









Կազմեց Թամարա Լամբրիանովան